ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶ ՁՈՐԱԳԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնք,
ՀՀ Լոռու մարզ, հ. Ձորագետ 1փ. 41 Հեռ. 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am
N Ե- 01/26

« 21» փետրվարի 2017թ.

ՀՀ Լոռու մարզպետ

Պ-ն Ա. Նալբանդյանին

Հարգելի պարոն Նալբանդյան

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն Ձեզ ենք ներկայացնում Ձորագետ համայնքի ղեկավարի 2017թվականի փետրվարի 21-ի թիվ 12-Ա, որոշումը:

Առդիր 1 թերթ

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ձորագետ համայնք, հասցե հ. Ձորագետ 1փ. 41, հեռախոս 093-33-88-09
էլ. փոստ dzoraget.lori@mta.gov.am

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«21» Փետրվարի 2017 թվականի N 12-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ԴՐԱՆՑ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին»,, Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի, ի կատարումն Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի 2017թվականի փետրվարի 16 թիվ 75-Ա որոշման՝

ՈՐՈՇՈՒՄ ԵՄ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի տարածքում 2017թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների կազմակերպման նպատակով.

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ձորագետ համայնքի տարածքում 2017թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն թիվ 1 հավելվածի:

2. 1) Համայնքի 2017թվականի բյուջեում նախատեսել գումարներ՝ բնական երևույթների և տարերային աղետների կանխարգելմանը և հետևանքների վերացմանն ուղղված միջոցառումների համար և մինչև 01.03.2017թվականը տվյալները ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն:

2) Յուրաքանչյուր ամիս մինչև այդ ամսվա 25-ը ներկայացնել տեղեկատվություն՝ կանխարգելիչ միջոցառումների իրականացման ընթացքի վերաբերյալ՝ համաձայն թիվ 2 հավելվածի.

3) Մինչև սույն թվականի մարտի 1-ը կազմել «Համայնքի տարածքում 2017թվականի ընթացքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման» միջոցառումների պլան և ներկայացնել Լոռու մարզային փրկարարական վարչություն՝ Լոռու մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի քննարկմանը ներկայացնելու համար:

3.Լոռու մարզի Ձորագետ համայնքի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովին՝ 2017թվականի ընթացքում պարբերաբար քննարկել Ձորագետ համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների և սողանքների կանխարգելման, դրանց հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանով նախատեսված միջոցառումների կատարման ընթացքը և կազմել տեղեկանքներ:

4. Սույն որոշման կատարման հսկողությունը դնել Ձորագետի համայնքապետարանի առաջատար մասնագետի վրա:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՁՈՐԱԳԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՍԼՅՈՎԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

2017թ. փետրվարի 21

հ. Ձորագետ